

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ


Ե. ՓՈՐՈՍԵԱՆ

ԽՐԱԳՐ. ԱՐՇԱԼՈՅՑ ԵՎ ԵՎՐՈՊԱ
ԳԱԶԻՐԷ (ՀԱՅԱՍՏԱՆԻԷ)

Rédaction du journal arménien

ARCHALOUICE

HABBANIEH LE CAIRE (ÉGYPTE)



ԼՐԱԳԻՐ

ԱՋԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՆԱԲԻ ԵՒ ՇԱՔԱԹ ՕՐԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան, ողջ դահկն.	60
Վեցամսեայ »	35
Տարեկան Թրամի	20
Վեցամսեայ »	13

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆ ԿԱՆԽԻ Է
ԵՒ ԹՂՔԱՏԱՐԻ ՄԱՒԲԸ
ԽՈՐԱԳՐՈՒՔԻՄԱՆ ՎՐԱՅ:

ԽՈՐԱԳՐՈՒՔԻՄԱՆ ՈՂՂՈՒՄ
ԳՐՈՒՔԻՆԻՑ ԵՍ ՀՆԵՆ ՏՐՈՒՐ:

Արշալույս թերթի Ազգայնապահության գործակա-
լու թիւերը, ներկայ ամսոյ սկիզբէն ստանձնած է
Տիար Յակոբ Փափազեան եւ իւր հասցէն է
A. PAPAZIAN
Chez K. Ipekian
Alexandrie

ՀԱՆԳԻՍՏ

ԱՍԵՆ, Տ. ԳՐԻԳՈՐԻՍ Ա. ԱՐՔԵՊԻՍԿ.
ԱԼԷԱԹՃԵԱՆԻ

Սկիւտարու Ս. Խաչ եկեղեցւոյն քա-
րոզիչ Գերաշնորհ Տ. Գրիգորիս Արքեպիս-
կոսոս անցեալ ամսոյ (Օգոստոս) 15/27ին
կիրակի առաւօտ վախճանած է եւ հետեւ-
եալ օրն ալ նոյն թաղին եկեղեցւոյն մէջ
օծման կարգը կատարուելով մեծ հանդի-
սաւորութեամբ մարմինը ամփոփուել է այն
դամբարանին մէջ, զոր իւր կենդանութեանը
ազգէն պատրաստած էր թաղին գերեզմա-
նատան մէջ:

Ի լուր Գրիգորիս Սրբազանի մահուան՝
տխրութիւնը եւ ցաւը ընդհանուր եղած է
Պոլսոյ բոլոր թաղերուն մէջ եւ ամէն դա-
սակարգի մարդիկ գունդագունդ զիմած
են իւր յուզարկաւորութեան հանդիսին
ներկայ գտնուելու: Հանրային սգոյ եւ սի-
րոյ անկեղծ արտայայտութիւնը, որ տեղի
ունեցած է իւր յուզարկաւորութեան փա-
ռաւոր հանդիսին անթիւ, ինքնին բաւա-
կան է ցուցնել թէ հանդուցեալը ո՛ր աս-
տիճան սիրոյ եւ համակրութեան խոր ար-
մատներ ձգեր էր ժողովրդին սրտին մէջ:
Ասիկայ անհերքելի ապացոյց մ'է նաև թէ
ժողովուրդը գիտէ սիրել իւր հոգեկան օգ-
տին համար անկեղծօրէն աշխատողները:
Արդարև հայ եկեղեցականութիւնը եւ ժո-
ղովուրդը մեծ կիրուստ մ'ունեցաւ յանձին
Ալեքսանդրի Սրբազանի, որուն նման պար-
տաճանաչ, անաչառ, ազգասէր եւ ազգա-
տասէր եկեղեցականներ շատ քիչ են մեր
մէջ: Կրօն. ժողովոյ ատենապետ Գեր. Գրի-
գորիս Արքեպիսկ. Յովհաննէսեան այս առ-
թիւ պատարագ մատուցեր եւ օծումը կա-
տարեր է: Բազմաթիւ եպիսկոպոսներ, վար-
դապետներ, քահանաներ եւ սխարհական
խումբն բազմութիւն մը ներկայ գտնուած
են հանդիսին:

Ամեն. Գրիգորիս Ալեքսանդրի Սրբա-

զան ծնած է Պալատ (ի Պոլսոյ) 1840 յու-
նիս 30ին: Նոյն թաղին Ազգ. վարժարանին
մէջ նախնական կրթութիւնը առնելէ յե-
տոյ, ընտանեօք Սկիւտար փոխադրուած եւ
հոն նախ Ս. Խաչ եկեղեցւոյ վարժարանը եւ
այա ճեմարանը աշակերտած է: Աշխարհ-
հականութեանը «Թոյնիկ Պեգաւեան անուն
թերթ մը հրատարակած է, ուրկէ մնացած
էր իւր ժողովրդական անունն Թոյնիկ Սրբ-
բազան: 1866ին Ալեքսանդրայ վանքի Ս.
Խաչ եկեղեցւոյն մէջ վարդապետ ձեռնադ-
րուելով քիչ մ'ատեն վանի մէջ պաշտօնա-
վարեց: Մշոյ առաջնորդ եղած միջոցին
Ս. Էջմիածին երթալով Գեորգ Գ. կաթո-
ղիկոսէն եպիսկոպոս ձեռնադրուեցաւ 1877
թուականին:

Հանդուցեալ Սրբազանը գաւառները
երկար տարիներ պաշտօնավարած է. վա-
նի, Բաբերդի, Երզնկայի, Մշոյ վիճակնե-
րուն մէջ կրկին եւ կրկին առաջնորդութիւն
եւ միանգամայն շատ մը վանքերուն տես-
չութիւն եւ վանահայրութիւն ըրած է: Պոլ-
սոյ մէջ ալ զանազան թաղերու քարոզիչ
կարգուած է եւ Ազգ. վարչութեան ժողով-
ներուն անդամակցած եւ Կրօն ժողովոյ ա-
տենապետի պաշտօն վարած է: Իւր պաշ-
տօնավարութեան միջոցին տաան եւ եօթնի
չափ եկեղեցիներ շինելու պատճառ եղած
է եւ դպրոցներ կառուցած: Վերջապէս արդ-
եամբք եւ վաստակօք ի կեանք մ'ունեցած
է հանդուցեալ եկեղեցականը:

Ալեքսանդրի Սրբազան 1895ին օրինա-
ւոր կերպով կիրակիոյ կաթողիկոս ընտրուե-
ցաւ, սակայն արդի խառն ժողովը Սուլթա-
նին բանեցուցած ճնշման տեղի տալով 1898
Փետրվար 21ի նիստին մէջ չեղեալ համա-
րեց այդ ընտրութիւնը:

Օրինաւոր ընտրութեան մը այդ բեկա-
նումը Օրմանեան Պատրիարքին դատապար-
տութիւնը եւ իւր պաշտօնին պատմութեան
աղտոտ էջին մէջ ամենամեծ արատը պիտի
ըլլայ յաւէտ:

ՆԱՄԱԿ ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱՅԵՆ

... Խմբագիր,

Մեծ ցաւով եւ մեծագոյն դայրոյթով կար-
գացի ձեր վարած կրկին պաշտօններէն հրաժարե-
ցուցման զեկուցագիրները: Այդ կրկու գրութիւն-
ները, որոնք շատ լաւ խորհած էք հրատարակու-
թեան տալ, մանրանկարն են Գահիրէի ազա դա-

սակարգին ամբողջ հոգեբանութեան, մարմնացու-
մը՝ անոր ամբարշտական ընդ որ յաւակնուողութեանց:
Որչափ ալ նիւթականապէս մնասուած ըլլաք այդ
քմահաճ տնօրէնութեամբ, պէտք է ուրախ ըլլաք
որ այդպէսով Գահիրէի ազաներուն ձեռքէն կըր-
ցաք իսկ այդ կրկին համարաւոր գրութիւնները,
որոնք իրենց գաւառապիրք, կամ աւելի ճիշդը՝ հա-
տարակայ կարծիքին առջեւ իրենց ինքնազիր դա-
տապարտութեան թուղթը նկատուելու սահման-
ուած են: Կը հաւատամ որ այդ թղթերու թողած
ազդեցութիւնը զանոնք կարողացողներուն վրայ՝
չպիտի ըլլայ վաղանցիկ. վասն զի այսպիսի հան-
գամանքներու մէջ ձեր պաշտօնանկութիւնը պարզ
անհատական բնաւորութիւն ունենող խնդիր մը
չէ. հարուած մ'է այն որ ձեր գլխուն վրայէն
կ'ուղղուի Եգիպտոսի ազատամիտ հայ երիտասար-
դութեան: Կը հաւատամ որ այդ հարուածի ազ-
դեցութեամբ պիտի ցնցուի Գահիրէի երիտասար-
դութիւնը եւ իրերու ճշմարիտ կացութեան առ-
ջեւ իր աչքերը պիտի բանայ վերջապէս իր աչ-
քերը սրտի բանայ տեղւոյդ երիտասարդութիւնը
եւ պիտի տեսնայ թէ ո՛րքան ազեկաբեր եղած է
իրեն համար, հասարակութեան ընդհանուր շահե-
րուն համար՝ իր անտարբերութիւնը կամ անմիա-
բանութիւնը, որով չէ կրցած ապացուցական դա-
սերով ցոյց տալ իր քաղաքի ազաներուն թէ ի-
րենց պաղերու օրերուն այդ հին բարի ժամանակ-
ները անգաւառելի կերպով անցած գացած են այլ
ևւս, եւ անոնց յաջորդած նոր ժամանակներ, նոր
բարքեր, նոր նկարագիրներ եւ նոր պահանջներ:
Ո՛վ որ իր ժամանակին հետ զուգընթաց չընթա-
նար եւ չկրնար կամ չուզեր յարմարիլ ժամանակի
ծնունդը նոր պահանջներուն, այդպիսին կենդանի
զիակ մ'է, եւ իրապէս ապրող, չնչող, զգացող,
խելող ու յատկապէս տարրին վրայ չկրնար իշ-
խել Այո՛, Գահիրէի հայ ամբարնները, իրենց միջ-
նադարեան — պիտի ըսէի անզրոյնեղեղեան — գա-
ղափարներով չեն կրնար զեկավարել հասարակու-
թեան յատկապէս նաւը: Նաւը առաջատաները
բացած՝ լայն ծովուն վրայ յատկապէս կ'ուղչէ:
Իսկ իրենք կուզեն մշտական անշարժութեան ճա-
հիճի մը մէջ խրել, խարսխել զայն: Հազի՛ւ զգա-
ցին այդ սղանները թէ Գահիրէի մէջ ալ հասած
հասունացած է երիտասարդութիւն մը, հազի՛ւ
տեսան այդ երիտասարդութեան մէջ կենդանու-
թեան, շարժումի, ոգեւորութեան նշաններ, անա-
սկոսան ամեն միջոց ձեռք առնել խեղդելու այդ
շարժումը, ջախջախելու այդ դեռաբոյս ուժը: Օր-
մանեանի վերջին արարքները արդարացիաբար չափ
պահպանողական հնազուրկ մարդիկը ինչպէս կըր-
նային անխտով զիտել քիչ ժամանակի մէջ նորա-
նոր երիտասարդական ընկերութիւններու հաս-
տատուիլը, քաղաքական նպատակով միթիւնկի մը՝
իրենց թիւին տակ եւ իրենց կամքին հակառակ
գումարուիլը, Փիւնիկի եւ Արշալույսի հրատարա-
կութիւնը, եւ հիմա ալ՝ իրենց պաշտելի Պատրի-
արքին դէմ դժգոհութեան ցոյցերու երեւան գալը:
Այս ամէն երեւոյթներուն առջեւ վրդոված՝ իրենց
միանձեան արտապետութեան բարձման վտանգը
նախատեսող այդ ամբարնները, կ'երեւի, իրարու
հետ միաբանեցան, իրենց ուժերը ժողովեցին, եւ
ուզեցին հարուած մը տալ երիտասարդութեան —
եւ այդ հարուածը իջաւ ձեր գլխուն վրայ:

Գահիրէի ազաները սակայն անհամեմատ ա-

ւելի իմաստութեան եւ հեռատեսութեան ապացոյցը տուած կրկնախնդիր, եթէ բնութեանը ժամանակներու փոփոխութիւնը, եւս կենսային անօգուտ մարտնչութիւնը եւ տեղի տալին երկրասարգութեան նոր ձգտումներուն առջեւ: Այդ ընկերու տեղի իրենք տուին պատերազմի առաջին նշանը, բայց այդ պատերազմէն յաղթական դուրս ելնելու համար չունենալով ո՛չ մէկ երաշխաւորութիւն կամ հաւանականութիւն: Ո՛րչափ ատեն որ նոր գազափարներ, նոր պահանջներ սակաւաթիւ անձանց մտքին մէջ միայն են ծնած ու հոն մնացած՝ յետամնաց պահպանողական տարրերը կրնան ժամանակաւորապէս խեղդել եւ արգիլել անոնց գործնական արտայայտութեան ձեւ ստանալը: Բայց ա՛յն օրը երբ նոր մտքերը հասարակութեան մէկ բաւական լայն շրջանին մէջ արդէն տարածուած եւ արմատ ձգած են, ո՛չ մէկ բանի ուժ եւ ո՛չ մէկ ընդդիմութիւն կրնայ խափանել անոնց արտայայտութիւնը: Գործերը այս վիճակի մէջ ըլլալով Գահիրէի մէջ ալ, ցաւալի է որ տեղի գազաները չեն կրնար ըմբռնել ամէն քաղաքներու մէջ տեղի ունեցող ժամանակակից երեւոյթներու համանման այս պարզ կացութիւնը, ու զոր տեղ կը փորձեն իրերու բնական ընթացքին զէմ պատուազ զնել իրենց անձերը: Հայ երկրասարգութիւնը՝ գիտակից իր կոչումին, նաեւ գիտակից իր ուժին, քմծիծաղով մը կը պատասխանէ այդ օրհասական փորձերուն եւ անոնց ընկերացող ըստպանալիքներուն:

Չօք-ազաները չկարենալով հանդուրժել որ Գահիրէի մէջ հրատարակուող հայ թերթ մը օգտուի այս կրկնի մէջ սիրող մասնու ազատութեան բարիքէն, ու նախանձելով այն գրաքննական սեղմումներուն որոնք կը կապեն կը կաշկանդեն մասուրը Տաճկաստանի մէջ, ելիւր են ինքնընտիր կերպով գրաքննութեան պաշտօն կատարելու ձեռք թերթին վրայ, ու՝ ձեզ օրէնքի առջեւ ամբաստանելու իրենց անզօրութեանը գիտակցութեանէն փրփրած՝ մտաբերած են նիւթապէս հարուած մը սալ ձեղի՝ ձեզ պաշտօնազուրկ ընելով: Ինչպէս ամէն բանապետները, իրենք ալ խորհած են թէ անկախ կարծիքները ու ազատ ձայնները խեղդելու լաւագոյն միջոցը ըլլայ թիրեւս անտեսական հաւաքանքը: Իրենք իրենց արժանիքն անգամ իրենց հարստութեան մէջ նկատող այդպիսիները չեն կրնար երբեք ըմբռնել թէ կրնան գոյութիւն ունենալ այնպիսի նկարագիրներ ալ, որոնք իրենց կրած անտեսական հարուածին յաջորդ օրը չէրթան քմիկ իրենց ոտքերուն շուրջը, այլ պահեն իրենց անկախութիւնը, եւ, հակառակ ամէն զբոհանքի, միան իրենց սկզբունքներու բարձրութեան վրայ:

Գահիրէի ջոջերը իրենց փառք կը համարին տակաւին պաշտօնական կանգնելի կ: Պօլսոյ աժմու «Ամեն Ս. Պատրիարք Հօր» հայ ժողովրդին համար այդ կենդանի մտած անկեալ մարդուն, որուն անունը այլ եւս իսպառ վտարուած է Վառնայի, Ռուսնուզի, Շուրաբի, Սիլիսթրիի, Քիսթիքի, Աղեքանակի, Սուրբի, Փոլիսքիսի եւ ուրիշ շատ տեղերու հայ եկեղեցիներէն:

Ու յաւակնոտ հոգածութեամբ մը՝ ելեր են մեր մատաղ մանուկները ազատելու «Չնասակար գաղափարներ եւ զգացումներ ներշնչելու» ընդունակ անձերու ազդեցութեանէն, որպէս զի նոր սերունդը երբ չափահաս ըլլայ ու կեանքի ասպարէզ ի՛նչէ, չըլլա՛յ որ նմանի այսօրուան բաւականաչափ զարգացած հայ երկրասարգութեան կամ զայն ալ գերազանց նորագոյն ազատ մտքերով ու գաղափարներով, այլ նմանի իրենց, իրենց հայրերուն, պապերուն եւ նախահաւերուն՝ ժամանակելով անոնց բրածոյ գաղափարները:

Թողունք այդ ազաները իրենց անօգուտ ջանքերուն մէջ: Թողունք որ իրենց անունը կցեն անկանգնելի կերպով ինկած մարդուն վարկարկականուն հետ, եւ անոր հետ միասին հանգչին իրենց զգալիներուն մէջ, կամ, եթէ կ'ուզեն, հանգչին գրկին մէջը անո՛ր որ 300,000 հայերու արեան պատասխանատուն է: Մենք չարունակներ մեր գործը հաստատ կենանք մեր ազնիւ ձեռքստմաներուն եւ մարտը իտէպններուն մէջ, զիտնանք պատշաճ գործունէութեամբ իրականութեան վերածել մեր այդ ձգտումները, եւ մեր յաղթանակը, զոճողութիւններով ու զրկանքներով տարած մեր յաղթանակը, թո՛ղ ժողովրդի շահերուն, ճշմարտութեան եւ իրաւունքի յաղթանակը ըլլայ:

րով տարած մեր յաղթանակը, թո՛ղ ժողովրդի շահերուն, ճշմարտութեան եւ իրաւունքի յաղթանակը ըլլայ:

ԴԻՏՈՂ ՄԸ

Յ. Գ. — Ուրախ եմ որ «Չայն մը Աղեքանակ-բիայէն» խորագրով նախորդ յօդուածս իր նպատակին հասած է մասամբ՝ տեղւոյց աղա-ամիրաներուն ջղերը գրգռելով: Ուրախ եմ, որովհետեւ բառ մը չեմ գործածած իրենց զէմ՝ որ իրենց կանխագոյն կամ վերջին արարքներով արգարացուցած չըլլան:

Ն Ե Ր Շ Ն Չ Ո Ւ Մ Ն Ե Ր

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՅԵՂԱՓՈՒՍԱԿԱՆ ԱՐԴԻ ԿԵՆՏՔԷ

120 երեսներէ բաղկացած այս գրքոյկը կը պարունակէ Պերճի (Մ. Տամատեան) հայրենասիրական ստանաւորները:

Գինն է 5 դրուս ողջ

Կը գտնուի խմբագրութեանս քով:

Խ Ա Ռ Ն Լ Ո Ւ Բ Ե ր

Պետրիւնի Ի Չիւնասան. — Օգոստոս 27 թուականու Տեյի Նիւզ հեռագիր մը կը հրատարակէ թէ՛ Հանքօի մէջ Պ. Ժարուէն Մաթէսըն եւ Ընկ. Բրիտանական հիւպատոս Պ. Հըրսթի հրահանգով իրենց ստացուածներու շուրջը վանդակապառներ շինելու ձեռնարկին կ'սկսին: Այս ստացուածները կը գտնուին Չիւնու կողմէ ուս կառավարութեան թողուած երկրին մէջ, որուն համար Ռուսերը յաճախակի ջանքեր ըրած էին իւրացնելու:

Պ. Հըրսթ հիւպատոսարանէն մարդիկ կը զրկէ գործաւորաց պաշտպանութեան համար, սակայն ուսական հիւպատոսարանէն 10—12 քաղաքներ կը յարձակին անոնց վրայ ու բռնութեամբ ետ կը մղեն:

Ատոր վրայ բրիտանական Վոս Լարթ թնթանութանաւիննաւապետ Սոնն, Պ. Հըրսթի հետ խորհրդակցելով 13 զինուոր (պլուտաքէթ) ցամաք կը հանէ եւ Վոս Լարթ թնթանութանաւն շարժման մէջ դնելով կ'ըստպառնայ զարնել ուսական հիւպատոսարանն: Պահիկ մը պատերազմն անխուսափելի կը թուէր, սակայն շուտով առաջըր կ'առնուի:

Հիմա պլուտաքէթներու (ծովային զինուոր) պահպանութեան տակ է այդ ստացուածքն, եւ բրիտանական Լարթ թնթանութանաւն Շանկայէն զրկուած է ի Հանքօ, տեսարանին վայրը:

— Թորիսիոյ երկսակաւ կացութիւնը. — Պօլսէն ուղղուած հեռագրի մը համաձայն, Տէրութեան գանձային վիճակը կը շարունակէ սնանկութեան տագնապի մէջ մնալ եւ մեծ դժգոհութիւն կայ այս մասին զինուորական պաշտօնէից մէջ: Լօխայ Անցէյկրի Պօլսոյ թղթակիցը կը գրէ թէ տարօրինակ տեսարանի մը հանդիսատես եղած է եւլբուտական նախարարութեան գրան առջեւ, ուր ժողովրդեան ստուար եւ հոծ բաղմունքին մը հաւաքուած էր իրենց ամսականները պահանջելու:

Եւրոպական նախարարն հրաման ըրած է որ սպասեն արահին մէջ եւ ինք չենքին ետեւի կողման դռնէն խոյս տուած է:

Լօխայ Անցէյկրի թղթակցին համար թերեւս նորօրինակ եւ զարմանալի թուի այդ տեսակ բան մը, սակայն ասանք շատ պարզ եւ սովորական բաներ են Թուրքիոյ մէջ:

— Կ. Պօլսէն թալլոյն կը հալորդեն Օգոստոս 28 թուականու: Երբորդի գաղտնի բօյններու պետ Ահմէտ ձէլալէտտին փաշայի Պօլս բերած ժէճ-թիւրքի կուսակցութեան վեց անգամներուն յատկացուած է չորս հազար ոսկի: Ասկէ զատ Սուլթանը հրամայած է որ ամսական մը յատկացուի միւս մնացածներուն ալ:

— Սեպտ. 4 թուականու Ռիւթէրի հեռագրին համաձայն Ռէննի մէջ դրոգիչ միջադէպներ տեղի ունեցած են գատավարութեան միջոցին:

Աւստրիական նախկին սպայ մը, Սէնիւզի, յայտարարեց թէ կեդրոնական եւրոպայի տէրութիւններէն միոյն սպայակոյտէն զօրական մը Տրէյֆուսի ձերբակալուածէն առաջ ըսած է որ, այս վերջինը մեծ արժէք ունեցող տեղեկութիւններ կուտայ ելեր:

Հարեւարացեալ Գինէէն յայտարարեց թէ, Տրէյֆուսի մեղապարտութիւնը հաստատող դեռ պատերազմական տակնին չի ներկայացուած թղթեր կան:

— Ամեն. Սօժրօնիոս Պատրիարքի մահը. — Աղեքանակիոյ, Լիբիոյ եւ Եթովպիոյ Պատրիարքը վախճանեցաւ երկուշաբթի օրը իւր Ռամէլէի բնակարանին մէջ կէս օրէ վերջ ժամ 3.10ին:

Սրբազան Սօֆրօնիօսը ծնած է ի Պօլս 1802ին, հետեւաբար 97 տարեկան էր:

Սարկաւազ ձեռնադրուած է 1820ին. յետոյ բաղմած է Կրէտէի եւ Գիսի Եպիսկոպոսական աթոռները: 1869ին Պօլսոյ Յուսնայ Պատրիարք անուանուելով չորս տարի վերջ իւր հրաժարականը մատուցած եւ քաշուած է Իշխանայ կղզիները:

1870ին Աղեքանակիոյ պատրիարքական աթոռին կոչուեցաւ, զոր 29 տարի շարունակաբար վարեց:

Սրբազան Սօֆրօնիօսը ուսեալ եւ օրինակելի համեստութեամբ օժտուած կղերական մ'էր եւ յունական եկեղեցոյն մեծ դէմքերէն մին: Իւր մահը միահամուռ ցաւ պիտի պատճառէ:

— Բուրգերու Թրամվայներու գծին բացումը հաւանականաբար ամսոյ 9ին շարժութիւն տեղի պիտի ունենայ, եթէ դարձեալ անակնկալ եղելութիւն մը չ'արդիլէ:

— Ռուսիա եւ Պաղկարիս. — Չարին մասնաւոր զինուորական պաշտօնով Պուլկարիս զրկած ուսական սպայակոյտէն գնդապետ ժըլիանչիւրը հասած եւ սկսած է զօրանոցները եւ զինուորական վարժարանները այցելել:

Ներկայ պիտի գտնուի զօրահանգչուներու եւ ուղղմանորդներու եւ երեք շարժութիւնները Ռուսիա պիտի վերադառնայ:

Ռուս գնդապետին պաշտօնը իշխան Ֆէլիքսիանուէն թելադրուած է, այս վերջինը շատ ճարտար քաղաքական փորձ մ'ըրաւ Չարին ամբողջ եւ կատարեալ վստահութիւնը գրաւելու համար, որ Պ. Սթոյլօֆի անկումէն եւ Կրքէֆի իշխանութեան բարձրանալէն ի վեր նուազած էր:

—ձիարարի.—Տեղակալ Պլոնտիօ, կարմիր ծովու արևմտեան եզերքին վրայ Ռահէյթայի սուլթանութեան մէջ, ֆրանսական կառավարութեան կողմէ իրեն յանձնուած աշխարհագրական պաշտօնը լրացուցած է:

Տեղակալ Պլոնտիօ մեծ խնամք պատրաստած է Տօմմէյրահի թերակղզին և իւր երկարածղուձը եղող պղտիկ կղզին:

Պ. Թապուրէնը իւր բանակետղին մէջ ընդունեց Պարահայի այցելութիւնը, որ Նթովպիոյ հողին վրայ բնակող մեծ պետ մ'է: Պարահայն մինչև ցարդ մերժած է ֆրանսական իշխանութեանց հետ յարաբերութեան մանելը. սակայն Պ. Թապուրէնի հետ ունեցած տեսակցութեան մէջ նշանակելի մտերմութիւն մը ցոյց տուաւ և յայտարարեց որ եթէ ճերմակները ուղղամտութեամբ վարուին տեղացիներուն հետ, կրնան իրենց աշխատութիւնները շարունակել առանց ո՛ր և է անհաճոյ միջադէպի: Նուէրներ փոխանակուեցան իբրև բարեկամութեան դրասական:

—Փորթուկալի մէջ հաւնանարակ.—Խընդիր է գիտնալ թէ Փորթուկալը ինչ կացութեան մէջ պիտի գտնուի, Վենետիկի ժողովին որոշումները, որոց մասնակցած էր, գործադրած չըլլալուն համար:

Օփորթոյն գրուած նամակ մը կ'ըսէ թէ, բնակիչները համաճարակին պաշտօնապէս ստուգութեանը դէմ կը բողոքեն, ուրովհետև վաճառականութիւնը դադրած է: Միևնոյն ժամանակ, մինչդեռ Լիզպոնայի մամուլը համաճարակին գոյութիւնը կը հաստատէ Օփորթոյնը կը հերքէ:

—Միւրան թագաւորին դէմ եղած դաւադրութեան մը դատը պիտի սկսի Օգոստոս 30ին. ամբաստանեալներուն թիւը 43ի կը հասնի: Դատավարութիւնները տեղի պիտի ունենան ի ներկայութեան գիւանապիտական մարմնոյն և ներպական մամուլի ներկայացուցիչներուն: Դատարանին վճիռը պիտի գործադրուի loi martialeի համաձայն, այսինքն 24 ժամուան մէջ, եթէ թագաւորը չը շնորհէ:

—Տարօրինակութեանց աշխարհէն.— Նիւ Եօրքի մէջ հիւանդանոց փոխադրուած է սպասուհի մը որ ինքզինքը խաչել փորձած է, այն գաղափարով թէ իր մեղքերուն թողութիւն ստանալու համար պէտք է անպատճառ Բրիտոսի պէս մեռնիլ: Փայտէ խաչի մը վրայ տարածուած է և մուրճով մը սկսած է բերեռել իւր ոտք ու ձեռքերը: Բրիտոսի նմանելու այդ յափշտակութեան մէջ համարեալ թէ ցաւ չէ զգացած: Այժմ կը գտնուի հիւանդանոցը, բրժիչները կը յուսան թէ կրնայ առողջանալ:

Ա Ձ Դ

Սերաստացի Հայոց Շահասիրական Ընկերութեան Տնօրէն Ժողովոյ 1899 Սեպտեմբեր 3ի երրորդ նստի որոշման համաձայն, ներկայիս պատիւ կը համարին ք հրաւիրել պատուարժան բաժանորդները, որ մինչև ց10 Սեպտեմբերի փութան վճարել իրենց մտից տուրքը եւ ամսավճարը Ընկերութեան Դասնապետ Տնար Մեսիա Մըսրէլանի պաշտօնակա Պանք Օթօմանի, Գահիրէի ճիւղին մէջ:

Վճարումներէ գոյացած դրամով ամսոյ 12ին պիտի գնուին Բրէտի Ֆօնտիէի պարգեւաւոր արժեթղթեր: Ամսոյ 12էն վերջ վճարող անգամք պիտի գրկուին նոյն ամսոյ մէջ վիճակելի պարգեւէն:

Ի դիմաց Սերաստացի Հայոց Շահ. Ընկ. Տնօրէն Ժողովոյ
Ա. Ասեմաղպիր
Ա. ՆԱԳՇՃԵՍՆ
Գահիրէ 4. Սեպտ. 1891

ՇՐՋՈՒՆ ԳԱՆԿ ՍԸ

Բժշկական միւզէի մը, կամ բնագիտական վարժարանի մը յատկացուած գանկ մը չէ որ կ'ուզում ներկայացնել ընթերցողաց. կաղապարի մէջ գաճէ թափուած գանկ մ'ալ չէ, որ յաճախ կարելի է տեսնել խառնուածքով ճգնակեաց կամ մեղամաղձոտ առանձնասէրի սեղանին վրայ. ո՛չ շան, ո՛չ ալ կապիկի գանկ մ'է այն շրջմովի գանկը, որ անցեալ օր Պազար Մուրուրի մէջ բարեկամի մը խանութը այցելելու պահուս աչքիս դպաւ. գործի սեղանին վրայ դրուած խորունկ խորունկ աչքերով ինձ նայող այդ պերճախօս գանկը կարծես ըսել կ'ուզէր ինձ. «Ճակտիս գիրը նայէ» նայեցայ... Գեռ թարմ էր, բոլորովին անփուտ, անեղձ, ակուսներու մեծ մասը բերնին մէջ, այտուկները տխուր ժրպատող թոքախտաւորի այտերուն նման գուրս ցցուած, աճառային բարակ թոսկըրներն անգամ չաւրուած, այդ ոսկորգանկի բաց բերնին մէջ լեզու մը միայն կը պակսէր, որ իր թշուառութեան պատմութիւնն ընէր ինձ. աւելի մտեցայ իրեն. գանկի ոսկրանցումներու կարերը գիտեցի ու չգիտեմ ինչու յանկարծ միտքս ինկաւ ճակատագիր բառը: Ու կարդացի անոր ճակտին գիրը: Մի' զարմանաք: Հայկական բեւեռագիրները, կամ եղիպական հիերոսկիֆները չէին կարդալիքներս այդ գանկի ճակտին վրայ: Հոն գրուած էր. «Մեռնելէք վերջը խանութէ խանութ աստանդական շրջիս, երբեք ալ ու տատանեալ մնաս Պազար-Մուրուրի խանութներուն անկիւնը»:

Հէ՛գ մարդ, ո՞ր անիրաւ ձեռքը արդեօք այդ բառերը ճակտիդ վրայ պեղեց. ու ինչ պիտի ըլլայ արդեօք ապագայ պատմութիւնդ: Չգիտեմ՝ այդ:

Որչափ որ կարողացայ քաղել այդ գանկի մասին Գահիրէի Հայոց Մարմինայի Գերեզմանատան Ժողովուրդն է եղեր ժամանակաւ: Օրին մէկը, գեռ տարի մ'առաջ, գերեզմանաքարեր շինող ճարտարապետ մը իր շինած մէկ տապանաքարը մեռելի մը վրայ զետեղելու պահուն հողը փորած ու այդ գանկը գտած է. գերեզմանատանէն իր հետ այդ գանկը դուրս հանելու համար քիչ մը վարանումէ վերջ — երեկ թէ մեր ճարտարապետը մեռելի գանկի սիրահար մէկն է — հաւանութիւն կը խնդրէ գերեզմանապահէն թէ կարող է իր հետ տանել այդ գանկը:

—Տա՛ր, բարեկամ, կ'ըսէ գերեզմանապահը, ինչ կ'ըլլայ որ, գաղթականի մըն է:

Ու գանկը մեռելներու աշխարհէն դարձեալ իր հին աշխարհը կը դառնայ:

Այս բանը մեղ առիթ կուտայ հարցը ներու թէ արդեօք մեր Տէր պապաները թաղման արարողութեան լրման չե՞ն արտասանած «Անշարժ եղիցի կնիք Տեառն մերոյ ի վեջայ ծառայիս», որ մեր հէգ գաղթական քրայրը երեկ թէ Մարմինայի գերեզմանատան տխուր վիճակէն դժգոհ, գլուխն առեր քալեր է . . . :

ԱՐԳՈՍ

ԿԻՍԱՄԵՆ ԹԱՂՈՒԱԾ ՄԱՐԴԸ

Հետեւեալ իր տեսակին մէջ եղական դէպքը, տեղի ունեցած է 1821ին եւ Հոլանտայի «Հասարակաց Բարեւոյ Ընկերութիւնը» ժամանակին հրատարակած է ի խրատ ամին անոնց, որոնք սովորութիւն ունին իրենց մեռելները շուտով թաղելու առանց մահուան ստոյգ նշանի: Հրատարակուած է նաեւ 1861ին Եւրոպա անուն օրագրին մէջ:

Թաղուած մարդը.—Երկար ժամանակ տաժանելի հիւանդութեան մը ճիրաններէն ճմուռած սկըսայ տակաւ առ տակաւ ուժաստիպ լինել. սակայն որչափ որ ֆիզիքական ուժս կ'ապառէր նոյնքան ալ հոգեկան կարողութիւններս կը զօրանային:

Բժիշկին աչքերուն ու լուս կեցողներուն կրակիծներուն մէջ կը տեսնէի իմ մահս, ինձմէ չ'կըրցին ծածկել թէ այլ եւս յոյս չունին ապրելու եւս ալ համոզուեցայ թէ աշխարհի մէջ ամեն բան վերջացած է ինձ համար: Երկոյ մը ճգնաժամու մէջ էի, բոլոր անդամներս սաստիկ զոդողով մ'էլ էին, ականջներուս մէջ կը տրեք ջրի ձայնի շնչելուն մը: Շատ մը երեւակայական տեսիլներ իրարու կը յաջորդէին անկողնոյ վրայ, ամենքն ալ լուսաւոր, թափանցիկ եւ անմարմին, շուրջս զանուղները ամենքն ալ ծանր, շնորհքով ու ճառագայթներով լի էին: Կ'ուզէի ոտքի վրայ ելնել սակայն մարմինս բոլորովին սառած էր. խնքս գլխէս թռած եւ անիմանալի վախ մը աւելի մեծցուց խնքիս ցրումն:

Ինչ մը հանդարտելէ յետոյ սկսայ ուշաբերիլ, սակայն երբէք չէի կրնար մազի չափ շարժիլ տեղէս. կը լսէի բարեկամիս ախ ու վախը, իր արցունքները կը թափուէին երեսիս վրայ եւ այն ատեն լսեցի աղախնոյ ձայնը որ կ'ըսէր. հոգին աւանդեց, մեռա՛ւ:

Ոտքով աննկարագրելի է թէ այս չարագուշակ բերնի խօսքերը ի՞նչպէս սարսափեցուցին զիս. բոլոր ուժովս կ'ուզէի համոզել զիրենք թէ կը խաբուին, եւ մտած չեմ. բայց ի զուր, մարմնական եւ հոգեկան բոլոր ուժերս անկարող եղան ո՛չ միայն աչքերս բանալ տայու այլ եւ զիս տեղէս շարժելու: Բարեկամս անկեղծ ցաւով քովս գաղովձեռքովը գպաւ երեսիս ու գոցեց աչքերս: Այն ատեն աշխարհ այլ եւս վերջացած էր ինձ համար, եւ մնացած էին միայն լսել, զգալ ու վիշտ կրել:

Բացորոշապէս կը լսէի սննեակիս մէջ եղողներու խօսակցութիւնները. իրենց խօսքերէն հասկըցայ որ բարեկամս ելած գացած է: Չգացի երբ զիսպատիկները մարմինս լուացին ու զիս հագցուցին. բարեկամներուս կսկիծէս աւելի ինձի նեղութիւն տուին զիսպատիկներուս անտարբերութիւնը, որոնք մէկգիւն մէկալ զին դարձնելով զիս գրեթէ կը ճաթէին վրաս ծիծաղելէն, եւ լրբութեամբ ծաղր կրնէին ա՛յն՝ որ արդէն զիս կը կոչուէր: Այդ զիսպատիկ աւազակները զիս պէտք եղած կերպով հագցնելէն յետոյ տեղի տուին սովորական արարողութեան: Մանթիներս եւ բարեկամներս երեք օր եկան գացին զիս տեսնելու համար: Կը լսէի իրենց հծծիւնը (Ֆըսըլթը): Երբորդ օրը այցելուներէն մին ձայն մը հանեց ըսելով՝ զիսկի հոտ կայ: Ինչ եւ իցէ զագաղ մը բերին եւ զիս մէջը գրին: Բարեկամս գլխուս տակը բարձ մը դրաւ իր ձեռքովը եւ ըսաւ. «վերջին անգամ» եւ զգացի երբ իւր տաք արցունքները կաթեցին երեսիս վրայ:

Ինչ մը եւս քովս կենալէն վերջ դուրս ելան, այդ միջոցին լսեցի անոնց ոտքերուն շնչելունը.

ինչպէս նաեւ գիտատիրոջն ընդհանրապէս լսեցի երբ զգագղին կախարչը վրան գրին ու գամնին կրգելով ու սուղելով: Եւրջս դարձած բուրջարժանները կը լսէի եւ կ'զգայի սակայն չէի կրնար շարժիլ ո՛չ ալ ձայն մը հանել: Այս ալ չգա մը անցաւ. գիտատիրոջն ընդհանրապէս ետ դուրս գալով ինչ որ լուր լուր լուր մը: Այսու ամենայնիւ զգացի որ դեռ զգալը գերեզմանին մէջ իջեցուցած չին, թէեւ զգալը մէջ բանտարկուած էի սակայն դեռ յոյս կարած չէի: . . . դեռ հոգիս բերանս էր եւ սակայն չկրցի երկար ատեն ուրախ մնալ այս յուսով:

Թաղելու ժամն հասաւ, զգագղս վերուցին ու գրին սայլի մը մէջ եւ սկսան քայլել. այն ատեն խելքս տեղ ըրաւ որ դեռ կը սանին յաւիտենական հանգստեան վայրը: Թափորը կեցաւ, զգագղը վար ատին նորէն եւ քիչ յետոյ անկարգ շարժումներէն հասկեցայ որ մի քանի մարդիկ կը տանին գիւ, քանի մը վայրկեան վերջ չուաններուն քունելու ձայնէն որոնցմով վար իջեցուցին զիս, զվանցի որ կ'որորուէի, անոնցմով կամաց կամաց վար իջնելով զգագղին յատակը յանկարծ զարնուեցաւ գերեզմանին յատակին, եւ լսեցի երբ չուանները զգագղին տակէն վեր քաշեցին: (Մնացեալը յաջորդ բուրջ) ՍՓԻՆՔՍ

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ Ի ԳԱՀԻՐԷ

ԵՐԵՎԱՆԻ ԳԱՀԻՐԷ ԲԱԾՆՈՒՄՍ ՄԱՆՁԵՐՈՒ, ԱՂԶԿԱՆՑ ԵՒ ՄԱՆԿԱՊԱՐՏԻՉԻ

Մանչերու դպրոցը կը գտնուի Անգղիացոց վարժարանի շէնքին մէջ ի Պապ-էլ-Պալատ: Աղջկանց եւ Մանկապարտիչի համար զատ տուն մը յատկացուած է, որ կը գտնուի ի Հօշ-էլ-Շարգավի, Տավուտիչի: Փորձառու ուսուցիչներու միջոցաւ պիտի աւանդուին Հայերէն, Անգղիերէն, Ֆրանսերէն եւ Արաբերէն լեզուները: Մանաւոր հոգածութեամբ ուժ պիտի արուի Անգղիերէնի: Մանկապարտիչի համար պատրաստ է մասնագէտ եւ փորձառու վարժուհի մը եւ մանկապարտիչի վերջին մէթոտներով ու գրութեամբ պիտի կրթէ մանուկները: Վարժարաններու բացումը սեղի պիտի ունենայ առաջիկայ Սեպտեմբեր կիսը: Մանրամասնութեանց համար գիւմը, Տիար Հաճի Փիլիպպոս Եպսկոպեանի ի Մէնչիչի: 5-15

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԼԱԶԱՐԵԱՆ

ԱՊՏԻՆ ԿՈՇԿԱԿԱՐ ԱՊՏԻՆ
Տայիբի Սանիբի ճիօս դիմաց

Ամենաընտիր ապրանքներէ կը պատրաստէ խիստ կոկիկ, հաստատուն եւ ճաշակաւոր կոշիկներ, արանց, կանանց եւ տղայոց համար: Գիները չափաւոր եւ աժան: Փորձ մը միայն կը բաւէ: 4-24

ԱՍԻԱԿԱՆ ՀԱՅԻ ՓՈՒՌ

Շաբա Մուհամեճ Ալի, Վիքորիա դեղարանի դեմ Մանաքքը փողոց թիւ 25
Մ. Թորոսեան, Կ. Բարունակեան եւ Բնիկ կը յայտարարեն թէ, իրենց նոր բացած փուռին մէջ կը պատրաստուի անխարզախ ալիւրէ ափսական թոնրի հաց եւ Լաւաւ: Մարտողութիւնը անպայման կերպով դերացնող Ասիական այս պատրաստութիւնը շատ մը փափկաճաշակներու գոհունակութեան արժանաթած է: Անվիճելի կերպով միակը եւ անմրցելիս ճԱՇԱԿԵՑԷՔ ԵՒ ՏԵՍԷՔ 6-8

ԼԵՒՈՆ ԿԻՒՄԻՏԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ

Ս. Ա. Ա. Սեւակի լի փանաւասան դիմաց

Վերջերս նաստատած իւր վաճառատան մէջ կը գտնուի պատի եւ քանսոյի ընտիր սեւակէ բանտիւններու մեծ մթերք:

ԴԻՄԵՑԷՔ ՀՈՆ եւ պիտի գտնէք ամէն ճաշակի յարմար զանազան տեսակ արանց եւ կանանց ժամացոյցներ, աղամանազարդ, ոսկիլ արծաթ եւ ճիւղի:

Ֆրանսական եւ ամերիկեան ապրանքաց ամենաընտիր տեսակներէն զարդեղներ, շքրաներ, օղիք, մասամբներ եւ այլն:

Ամէն տեսակ ժամացոյցներու նորոգութիւն կը լինի, արհեստին կատարելագործութիւններուն ծանօթ ժամագործի մը միջոցաւ:

ԳԻՆԵՐԸ ԽԻՍՏ ԶԱՓԱՒՈՐ 9-50

ՏՕՐՔԻՑՐ ԺՕՐԺ Փ. ԷՎԼԻԵԱՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԱՏԱՄՆԱԲՈՅԺ Ապսին, Շարի Գուպի, թիւ 55

Կը պատրաստէ ամեն բերաններու եւ հասակի յարմար ընտիր ապրանքներով կեղծ աղաններ:

Կը դադարեցնէ վայրկեանապէս ակուայի ցաւերը ամերիկեան նորագոյն մեթոտով իւր պատրաստած դեղերով:

Կը բուժէ լինտերու եւ բերնի ամեն տեսակ հիւանդութիւններն:

Իր լեցուցած աղաններուն տոկունութիւնն առ նուազն երկու տարուան համար կ'երաշխաւորէ: 1-10

ԱՌԻԹԷՆ ՕԳՈՒՏ ՔԱՂԵՑԷՔ

Օգտուեն եւ յարմարաւոր տեղ մը լաւ կահաւորեալ սրճարան մը կայ, որոյ տէրը մեկնման պատճառաւ կ'ուզէ ծախել: Հաստատուն գործ մը ունենալ փափաքողներն, թող դիմեն Արաբայի խորագրատուներ, հարկ եղած մանրամասնութիւններուն տեղեկանալու համար: 3-3

ԳՐԻԳՈՐ ՊԵՇԻՐԵԱՆ

ԿՈՇԿԱԿԱՐ Պագար Մաւրու Թիւ 39

Պատիւ ունի ծանուցանել թէ, իւր խանութը Շարա Միւզէյիէն փոխադրած է ի Պագար Մաւրու: Ֆրանսական նորաձեւութեանց յար եւ նրման կոշիկներ պատրաստելու մէջ իւր ունեցած հմտութեամբ մինչեւ ցարդ գո՛ր ըրած է իրեն գիմող Պատ. յաճախորդներն:

Իւր գործածած ապրանքներու տոկունութիւնն երբէք տարակոյս չ'վերցնիր:

Իրեն եղած յանձնարարութիւնը ո՛չ միայն չափաւոր գներով, այլ եւ փութով եւ մեծ խնամով կը պատրաստուին:

Դիմեցէք, եթէ կ'ուզէք ճաշակաւոր հագնիլ եւ կոշտերէ (նասրք) ազատ մնալ: 7-24

Հ. ԱԶԱՏԵԱՆ

ՂՈՒՐՐԻԷ, ՎԷՔԱԼԷՑ-ԷԼ-ԱՍՍՊԻ ԿԻՑ

Կը ծախուի ընտիր տեսակէն մազի ներկ (րաստրդ) սեւ, շաղ անակազոյն եւ ոսկեգոյն: Սեւ ներկ շիշով վայրկեանապէս սեւցնող: Սոյն ներկերու տեսողութիւնը մէկ ու կէս ամսուայ համար երաշխաւորեալ է:

ՀՐԱՇԱԼԻ ԶՈՒՐ ՄԸ

Հերթափութիւնը կը դադարեցնէ եւ մազերը կը ճոխացնէ: Նմանապէս ճաղատ (տազ) գլուխները մազ կը բերէ. 17 տարուան ճաղատ գլուխներու վրայ փորձուած եւ հիւանայի արդիւնք տեսնուած է: Շիշը 8 զըշող (2 ֆրանք):

ձերմկցնող շուր շիշով, որը մարմնոյն բնական սպիտակութիւն կուտայ առանց զգացնելու: Եզիպտոսի մէջ միակը:

Ակուայի փոշի եւ շուր. մին մաքուր եւ ճերմակ, միւսը հիւանդութիւններէ զերծ պահող եւ ամրացնող:

Թող փութան օգտուիլ այն անձինք՝ որոնց գլխու մազերն սկսած են տակաւ առ տակաւ թափիլ եւ օր մը ճաղատ ըլլալով վտանգին ենթարկուած են:

Կը գնենք, կը վաճառենք եւ կը փոխանակենք բոլոր սզգաց գործածած նամակադրոշմները: 7-8

ՏՊԱՐԱՆ-ԿԱԶՄԱՏՈՒՆ ԵՒ ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ Ի ԳԱՀԻՐԷ ՇԱՐԱ ՄՕԶԱՄԷՏ ԱԼԻ (ՀԱՊՊԱՆԻՅԷ) Ս. ԴԱՐՐԻՆԵԱՆ պատիւ ունի յայտարարելու թէ, յետ այսու ամէն օր առաւօտեան ժամը 7 էն մինչեւ երեկոյեան ժամը 8 ը, պիտի գտնուի իւր Տպարանին մէջ եւ պիտի ընդունի ամէն լեզուէ տպագրական ամեն կարգի եւ տեսակի յանձնարարութիւններ. ինչպէս՝ Շրջաբերականներ, Մահազդեր, Հրախազեր, Այցնխաւեր, Ցանկեր, Գիրքեր, Տեղեկագրեր, Հաշուեցոյցներ, Կանոնագրեր, Տոմսեր, Ընկերութեանց եւ վաճառականներու սպագրական արձեւ պիտոյցներ: Իւր տպարանին մէջ եղած նորանոր կարգադրութեանց շնորհիւ կը խոստանայ յաճախորդները ըստ ամենայնի գոհացնել գործերու մարտութեան, ճշրապահութեան եւ գներու չափաւորութեան մէջ: Եզիպտոսի ու է քաղաքէն կամ գիւղէն եկած յանձնարարութիւնները ամենայն ինամօք եւ փութով կը կատարուին: